

# ՃՈՂՈՎՐԴԻ ՄԵԶ

ՐՕՋԵԳՐԻ

Առաջին կիրակի 1897 թ.

Ընդունեցէք ողջոյնս, թանկագին բարեկամներ և խնդացէ՛ք,  
խնդացէ՛ք, խնդացէ՛ք:

Ես կլ կծիծաղեմ, երբ կվերջանալ այս նշանաւոր տարին,  
որի առաջին երկու օրերը լաւիտենականութիւն են թւում ինձ:

Իսկ այս վայրկենիս ես այնքան կլ տրամադրուած չեմ  
ծիծաղելու: Վեց տարի գրչով աշխատելով ձեզ հետ, ես չփ-  
տէի կլ, թէ ինչ բանի մէջն է կայանում իմ կոչումը. այժմ  
միայնակ որոնում եմ նրան, շրջմոլիկ ցուազը ձեռիս և լուս ու-  
նիմ գտնել. իսկ հետևեալ նոր տարուայ նախօրեկին ես կերե-  
ւամ ձեզ զարհուրելի տեսքով, եղանը ձեռքիս... սակայն մինչեւ  
ալդ՝ նստած եմ գիւղական հիւրատանը, Սուդէն գիւղում, և  
զրում ձեզ առաջին նամակս: Երեկ ինձ արտաքսեցին արդէն  
գիւղական երկու բակից, ուր ես գնացել կի վարձուելու  
մշակութիւն անելու համար: Մի տեղ շրջմոլիկի տեղ ընդու-  
նեցին ինձ և դուռը շրիկացրին վրաս:

Երկրորդ բակում, երբ ես զլխարկս վերցնելով հարցրի մի  
փոքրահասակ, հասալիկ, բռնկուող տանտիրոջ, թէ արդեօք  
վարձուորի կարիք չունի, նա զարմացմամբ նայեց ինձ:  
Թետոյ լանկարծ փեշերս բռնեց և հարցրեց, թէ այս չէ ար-  
դեօք իմ եղանը և ընդունակ իմ արդեօք աշխատելու ալդպիսի  
սպիտակ ձեռներով: Ես ըս զայրացալ, այլ միայն խնդրեցի, որ  
փորձի համար ընդունեն ինձ և անցազրի փոխարէն ցոլց տուի  
զինուորական ծառայութեանս վկալականը, ուր գրուած էր,  
որ ես պահեստի սպալ եմ:

— Իսկ ինձ պէտք կլինէր անտանտապահ, — ծաղրեց զիւղացին — Ահա մի լիմարը դասայ:

Դործը դորանով էլ վերշացաւ:

Վաղը ես պիտի շարունակեմ ճանապարհուա:

Այս զիւղական հիւրատունը աանելի լինէր, եթէ զոնէ զինին փոքր ինչ լաւ լինէր և եթէ այնտեղ ստանալիս լինէին մեր «Կօնտինենտալ փոստ» լրագիրը...

Հարեւան սեղանի վրայ ամբողջ երկու ժամ դրուցատրում են հորթը ծախելու մասին: Որպէս նոցա դասակարգի ապագայ անդամ, ես ականջ եմ դնում նոցա խօսակցութեան, բայց ամբողջովին չեմ հասկանում նրանց ասածը. մի շաբաթից դարձեալ կըրեմ:

ՀԱՆՑ ՑՐԱՊԻՏԵԽՆՈՐԺԵՐ

«Կօնտինենտալ փոստի» հրատարակութեան տնօրէն: Այս տիտղոսս պահպանեցէք մինչեւ հետեւեալ տարին:

Երկրորդ կիրակի

Արժանամեծար պաշտօնակից Մէյեր

Մի կարծիր, թէ զիւղական կեանքից ֆէլիէտօններ կուղարկեմ քեզ: Մտքովս էլ չի անցել զիւղատնտեսական թղթակցութիւններ գրել:

Ուղարկում եմ քեզ միմիալն տիսուր տեղեկութիւններ մի մշակի դժբաղդ պատահարների մասին, որ տեղ է որոնում իր համար:

Երկուշաբթի և երեքշաբթի դիմեցի առնուազն տասներեք զիւղացու: Ես կարծում էի, թէ տասներեքերորդը այնքան դժբաղդ կլինի, որ կրնզունի ինձ: Սակայն նորա մօտ էլ պահապան հրեշտակ գտնուեցաւ: Տեսնում ես, ես արդէն իմ մտքերն սկսում եմ յարմարեցնել ժողովրդականութեան, բայց ըստ երեւութիւնի ինձ քիչ է օգնում ալդ: Մէկին ես խիստ բարեկազմ եմ թւում, երկրորդի համար շքեղ եմ հագնուած (հագուստիս վրայ թէկ ծակեր կան, բայց կարկատան չկայ, ինչպէս վայել է զիւղացուն). Երբորդը շրջմոլիկի տեղ է քնդունում ինձ, որովհետեւ կապոցիս մէջ հետո ման եմ ածում

իմ ամբողջ դուքը. չորրորդին դուր չի դայի սպիտակ օծիքս և այլն. Վերջապէս, մազերս խճճելով, ծեռներս կողրի ու ցեխի մէջ թաթախելով, մտայ մի խրճիթ, ուր տանտէրը հարցընթէ ուր եմ գնում:

— Զինուորական ծառայութիւնը աւարտեցի: Փառք Աստուծու, վերադարձալ դիւզի Ուհ, այդ քաղաք առածդ, այդ ժառայութիւնը: Մարդ պէտք է իր աչքով տեսնի, թէ ինչ է կատարւում այնտեղ: Ուղղակի մարդու միրտը ցաւում է, երբ ծեռքի սովորական աշխատանք չունի: Աշխատանքը միակ բարիքն է աշխարհում:

Ես կարծում էի, թէ այսպիսի խօսակցութեամբ աւելի լաւ կհասնեմ նպատակիս. բայց սխալուած էի: Տանտէրը դարձաւ մի պառաւ կնոշ, որ կանգնած էր նորա ետև.

— Լսո՞ւմ ես այս զատարկաբանութիւնը: Ով որ գիտէ, թէ ինչ բան է աշխատանքը, այդպէս չի խօսի:

Իսկ պառաւը պատասխանեց. մի՞թէ այսպէս ուշ գիշեր դուրս կանես դրան:

— Թող տօները մեզ մօտ անց կացնի: Այնուհետև կտեսնենք: Ես կարծում էի, թէ կմնամ նրանց մօտ իբրև վարձուոր:

Տօնը լաւ անցկացրինք, բայց հետևալ օրը երեաց, որ Ես ոչ միայն բոլորովին ոչինչ չգիտեմ անել, այլ և չէի էլ կարողանում կարգին հասկանալ, թէ ինչ էին ուղում ինձանից: Տանտիրոջս խօսքով Շթէպէտ ցանկութիւն ունեմ, բայց շնորհք չունիմ:

Ստիպուած էի շարունակել ճանապարհը:

Ես ուղևորուեցի դէպի սարերը, զուարհանալով շքեղ բնութեամբ: Կայլինդի մօտից գնացի դէպի ազ, գետի տիով, Ալմհայի ուղղութեամբ: Ճանապարհը ծածկուած էր ցեխով և նոր եկած ծիւնով: Սովից կիսամեռ հասայ մինչև մի մենակեաց խրճիթ, որաեղ ինչպէս ասել էին ինձ, բնակւում էր մի այրի գեղջկուհի, որ վարձուոր էր որոնում:

Ալրին, թարմ, աշխոյթ մի կին, սկսեց ինձ հարցաքննել. Քանի՞ տարեկան եմ.

— Քսան, ապացի ես, դպրոցում անցկացրածս տասնեհինգ  
տարին հաշուին չէ—այդ ժամանակը կօրած է.

Նա ծիծաղեց, բայց շարունակում էր քննել.

Ի՞նչ կարող եմ կատարել:

— Ոչ մի գործից չեմ փախչում:

Ի՞նչ է իմ դիմու:

— Ես ամեն բանով բաւական եմ:

Բայց այս պատախանը շատ կասկածաւոր թուաց այրուն,  
երեկի փորձով գիտէր, որ տան մէջ ծառայողները երբէք ոչնչով  
բաւական չեն լինում:

— Ահա թէ ինչ—ասաց նա արհամարհանքով.

Ամեն մարդ իր արժէքը գիտէ: Ինձ այժմ ոչ ոք չէ հար-  
կաւոր:

Եթէ ես տարեկան 80 գուլդէն ուղէի, այլև մահուդէ շոր  
և կօշիկներ, նա կը վարձէր ինձ: Բայց նուերներ բնդունել նա  
չէր կամենում: Այդ ես հասկացայ միայն յետոյ:

Սկսաել միջավայրն էլ, իսկապէս, մի աեսակ անիծուած է:  
Երկու կողմից բարձրանում են սև ղառիվայր սարեր, նսանուե-  
լով ածուխով լի հակալական, շուռ տուած կողովների. էիրները  
նեղ ու գաճան, ինձ ասացին, որ ամենից վեր, վերջին խրճիթ-  
ներում, միշտ վարձուորների պակասութիւն է զգացւում, որով-  
հետեւ եկողներից ոչ ոք չէ կարողանում երկար մնալ:

Երեկ երեկոյեան ես եկալ բարձր սարերի վրայ զանուող  
հովիար: Անտեղ, ուղղահայեաց ժայռի մօտ ծղուած է զիւղը:  
Տները մասամբ անտաշ քարից, մասամբ փայտից, թափթփուած  
են անկանոն ու ցիրուցան. Երկու-երեք մեծ գաւիթներ, նո-  
րանից յետոյ փայտ կտրելու գործարան և ածխագործի խրճիթը:  
Մի փոքր հեռու, զառիվայրի վրայ, կանգնած է եկեղեցին սրա-  
ծայր գմբէթով. եկեղեցու կողքին քահանայի անտեղ. ներքեւ,  
առուակի մօտ, ուսումնարանը: Ի հարկէ, կայ և երկու հիւ-  
րասուն, որոնցից մէկում ես իշլամնեցի: Այդ տեղը կոչում է  
Հօլղենդօրֆ և շրջակայթի կենդրոնն է կազմում: Իմ ներկայու-  
թեամբ հիւրանոց եկաւ անտառի մի թաւամաղ արջ և խօսակ-  
ցութեան ժամանակ ասաց, որ Վենա քաղաքը տասն անգամ

մեծ է Հօղենդօրֆից, որի համար տանտիկինը նորսն մեծախօս անուանեց:

Այս ըոպէիս այստեղ է պոստատարը, ճանապարհ է ընկ-նում: Սա մի երեք ոտանի մանրավաճառ է, որոնցից մէկը փալ-տից է, իսկ երկուսը ոտնացաւով վարակուած: Նա տանում է փոստը Կայլինգ: Երեք ոտանի մարդը կտանի նաև ձեր թա-փառաշրջիկ գիւղական վարձուորի ալս նամակը:

Երրորդ կերակի

Դոկտոր Շտէյնին

«Կօնտինենտալ փոստի» հրատարակչին. վերջապէս գտայ վարձուորի պաշտօն:

Անդրեմ լրագիրն ուղարկեք ինձ Ալմդալ Հօղենդօրֆի մօտ Շնորհակալութիւն վերջին համարի մէշ եղած ծաղրի համար:

Մի տարուց լետոյ ծաղրելու ցանկութիւնը կանցնի ձեզ համար: Առաջման աւելին գրելու արամադրուած չեմ:

Հ. Տ.

ՊՐՈՖԵՍՍՈՐ Ա. ԶԻՄՌՈՒԿԻՆ Մ.-ում.

Ալմդալի. 17 յունուար 1897

Սիրելի և վաղեմի բարեկամ.

Նամակդ երկու շաբաթ որոնում էր քո Հանսին և գիտե՞ս որտեղ գտաւ: Սարերում, ծիւնածածկ մի խրճիւմ, մեծ ճա-նապարհից մի ժամ հեռու: Նա, որին ուղղուած էր նամակդ, ապրում է այնտեղ ինչպէս վարձուոր մի տարօվ վարձուած: Կատակ չէ, հաւատացնում եմ քեզ: Դեռ, լսիր:

Շնորհակալ եմ քեզանից բարեկամութեանդ համար, որին հաւատարիմ մնացիր աշակերտական նստարանից: Հասարակ օ-քերին աշխատանքը կլինի իմ դաժան ընկերը, բայց ինձ սար-սափեցնում է կիրակնօրեալ հանգստութիւնը, երբ շուրջս ոչ ոք չի լինի, բացի իմ համարնակիչներից և սառը ձմեռից ու լռա-կեաց սարերից: Ալդպիսի ժամերին, թոյլ տուր ապաստարան գտնել քեզ մօտ, գրչով խօսակցել քեզ հետ, հայնուել, ծիծաղել,

գուցէ և... Ոչ, ես լաց չեմ լինի, այդ ես հաստատ որոշել եմ: Ինչ որ պատահի ինձ հետ, հոգով չեմ ընկնուի: Դիւրին չի լինի ինձ բացատրել քեզ պատճառը, թէ ինչից զրդուած դիմեցի արդ քաղի—արդքան անմիտ, անօրինակ քաղի: Եթէ դու իմ այս վարմունքի մէջ գտնես քաջութեան գէթ մի նշովլ, զրիր ինձ արդ մասին. խիստ անհրաժեշտ է, որ մէկը քաջալերէ և օգնէ ինձ:

Այս ամենը ահա թէ ինչպէս պատահեց ինձ: Ըստ սուվորութեան, մի անդամ աշնան և Կոնտինենտալ փոստի» դիմաւոր շտարը հաւաքուեց փոքրիկ ճաշարանը և երեք թէ չորս դաւաթթ զինի խմելուց իւսով լեզուիս կապանքները բացուեցան ու սկսեցի խիստ խօսել մի ինչ որ կարգավորութեան մասին և հաւատացնել, թէ միայն դիւղում կարելիէ զեռ էլի մարդիկ դտնել: Ես սկսեցի աղաղակել, թէ զիւղացի վարձուոր աւելի բարձր է քան սեղանաւորն ու լրազրողը. այս-տեղ մեր հրատարակիչ դօկաօր Շաէնը, քաղցը ժպաաց և հեղահաճրոր ժափիտով ասաց. «Հէ՞ որ ոչինչ չէ խանդարում պարոն Տրաուտենդորֆերին լրազրողի վատարարոյ գործունէութիւնը դիւղական պատուաւոր աշխատանքի փոխելու»:

Ես կատաղեցի: «Ի՞նչ կայ որ: Ոչ ոք չի համարձակուի ասել թէ լեզուս աւելի ուժեղ է քան ձեռներսա: Դարձեալ մի շեշ դինի բերին: Շատերը, ակներև, վախենում էին ծիծաղել ինձ վրայ, չկամենալով աւելի դրզուել ինձ: Բայց ես չէի կարող հանգստանալ: Ինձ առաջարկեցին զրադի համար մի շարաթթ դիւղական վարձուոր դառնալ:

«Մի՞ շաբաթ, ամբողջ տարի կծառալեմ», ասացի ես: Պարոն Շտէնը թմրկահարեց սեղանի վրայ մատներով և յայտարարեց հանդիսաւոր կերպով:

«Եթէ պարոն Տրաուտենդորֆերը ամբողչ 1897 թ. ընթացքում, սկիզբից մինչև վերջը, կծառալի դիւղում դաղակարական մարդկանց մօտ, այն ժոմանակ ես իրաւունք կիսնդրէի յանձնել նրան 1898 թ. յունուարի մէկին քսան հաղար կրօն: Իսկ եթէ պ. Տրաուտենդորֆերը նոյն իսկ մէկ օրով պակաս ժառալէ. այն ժամանակ նու երկու տարու այ ընթացքում տ-

ռանց ոռնկի թող ծառալէ «Կոնսինենտալ վոստի» խմբարատանը:

«Վճռուած է և ստորագրած— ծախում եմ ես»:

«Ուրեմն վաւերացնենք նօտարի մօտ»:

«Պէտք չէ, ալստեղ երեք վկալ կայ, Ազնիւ խօսք եմ տալիս»:

Դու սարսափում ես: Ես ինքս սարսափեցի միւռ առաւօտ: Բայց աղնիւ խօսքը պէտք էր կատարել:

Ասում են, որ իմ մէջ մի քանի կաթիլ ուամկական արիւն կայ: Ուրեմն փորձենք վերածնուել: Գուցէ կլաշողի ինձ ուղղել այս մարդկային հողին, որ արդէն սկսում է վիշանալ. բաւական լաւ էլ նուեր է սովասում ինձ, իսկ այնուհետեւ երկար տարիներ անհոգ կապրեմ:

Այսպիսով դործը լուրջ կերպարանք ստացաւ և ներկայ թուի սկզբին ճանապարհ ընկայ: Բայց և տանջուեցի: Երկու շաբաթից աւելի թափառում էի առանց հացի. մի փոքր էլ և ստիպուած կլինէի ողորմութիւն խնդրել կամ գողութիւն անել:

Լեռնային Հօլգենդորֆ դիւզում սահմանած էի մի քանի օր մնալ, անտանելի եղանակի պատճառով և երեխ այստեղ էլ կը-մնայ քո թեթեամսիս ընկերը: Մի անգամ հիւրատանը թուղթ էի խաղում մի երիտասարդ ժաղկատար մարդու հետ, որ նման էր անտառապահի օգնականի: Ինձ միշտ գուր են գալի ծաղկասար դէմքեր, նրանք վկալում են մահուան հետ ունեցած մենամարտութեան լաշող վախճանի մասին: Միայն նրա աշքերը լիշեցնում են քաղաքը: Ամեն անգամ, երբ տարբեռում էի, նա միսիթարում էր ինձ, գուշակելով լաշողութիւն սիրու մէջ: Ե՞ս և սէր: Տէր Աստուած, որտեղ են այդ ժամանակները: Դժուարութեամբ լաշողուեց ինձ վճարել նրան տանուլ տուածս մի քանի կրէլցերը, որից լետոյ նա ինձ հրաւիրեց իր մօտ մի գաւաթ սուրճի: Այս ամենը պատճում եմ քեզ, որովհետեւ նա ոչ թէ անտառապահի օգնական էր, այլ ուսուցիչ, և դա էր որ ուղարկեց ինձ իմ նոր պաշտօնի:

Ուսուցիչը ամուրի է: Ես բարկացնում էի նրան, ասելով

որ իսկական դիւղական ուսուցիչը պէտք է կին և կէս դիւժին երեխաներ ունենալ.

—Ա՛յ իմ ընտանիքը—ասաց նա, մատնացոյց անելով իր գրքերը, զետեղուած ապակէ պահարանում։ Այնտեղ կայլն և վալտեր Սկսոտ, և Լեսախնդ, և Շիլեր, և Զօլա, և Կելլեր և Շպիլհագէն։

Ի՞նչպէս կարող է արլափիսի գանծի տէրը թղթախաղութեամբ պարապել։

Այո՛, ես խղճում էի նրան։ Գրքերով չէք կարող բաւականութիւն պատճառել ճանապարհորդին։

—Ես ճանապարհորդ չեմ, ինձ պէտք է դիւղացի համարել։  
—Ահա թէ ինչ։

Սուրճից յետոյ, դրոյցի ժամանակ ուսուցիչը պատահմամբ շուռ տուեց սրճամանը և հեղուկը թափուեց սփոռոցի վրայ շագանակագոյն օձածե գծով։

—Ա՛յ երը է հարկաւոր տանտիկինը—ծաղրում էի նրան—մի ընտանեկան տեսարան տեղի կունենար, իսկ երեկոյեան, ի հարկէ, բոլորը կը վերջանար սքսնչելի հաշտութեամբ։

—Մի քանի թափած կաթիների համար մենք երբէք չենք կռւում։

—Ի՞նչպէս։ Ուրեմն դուք տանտիկին ո՞ւնիք։

Ուսուցիչը ողչ կարմրեց։

Բայց ալոտեղ, բարեկամո, պէտք է որ կանգ առնեմ։ Լապտերիս ճրագուփ մոմը, որ վերջը էի փարախից, ալրուեց, և նամակիցս յետոյ ես ուրախ և երշանիկ էի զգում ինձ մինչև միւս կիրակի։

#### ԲՈ ՀԱՆ

Զորբորդը այն կիրակիներից, որոնց անհամբեր սպասում եմ։

Իսկ ալժմ, պրօֆեսոօր բարեկամս, վերջացնում իմ անցեալ կիրակուալ հանրապատմական փաստաթուղթը, որպէսզի գիտենաս, թէ ուր եմ, և ինչպէս պատճեցը, որ տլատեղ ընկալ։

Զլ ցանկանալով մտնելուսուցչի գաղտնիքների մէջ, Գարց-

րի նորան, թէ արդեօք ալստեղ սարերում ոչ ոք վարձուոր չէ՝ կամենում:

— Այն էլ ինչպէս.—բացականչեց նա.—ամենքը որ ընդունակ են աշխատելու, հեռանում են ալստեղից, գուցէ և անհրաժեշտութիւնից դրդուած: Ոչ ոք չէ ցանկանում ծառալել փոքր վարձով: բոլոր վարձուորները ալնպիսի պահանջներ ունին, որոնց մեր լեռնական գիւղացիները բաւարարութիւն տալ չեն կարող: Ուղղակի փորձանք է:

— Ես կարող էի էժան վարձուոր ցոլց տալ:

— Էժա՞ն: Այն ժամանակ նորան չեն տալ աւելի վարձատրութիւն:

— Բարի ցանկութիւններ շատ ունի նա առողջ է և ուժեղ: Եթէ միայն սկզբում փոքր ինչ զիշող լինեն դէպի նա:

— Եթէ ալդպէս է, ալժմէն իսկ կարող եմ տեղ գտնել նորա համար: Միայն թէ շատ վեր սարերի վրայ, վերջին իրրեհիթներից մէկում, Աղամ գիւղացու մօտ: Գիւղացին ինքը հիւանդ է, անդրանիկ որդին զինուոր է գնացած, երկրորդի ձեռքը որսորդը գնդակով ծակել է և չի կարողանում աշխատել: Կրտսերը դեռ ուսումնարան է յանախում: Մի աղջիկ էլ ունեն... Լաւ մարդիկ են, բայց այժմ շատ ծանր վիճակի մէջ:

Միւս առաւօտ, չնայելով բուք էր, մի քանի երեխայք եկան ուսումնարան, ամենքն էլ փաթաթուած տաք շորերի մէջ: Եկաւ և Աղամի փոքր որդի Ֆրանցելը: Ուսուցիչը հարցըեց թէ ճանապարհը ինչպէս է:

— Ես տախտակով զլորուեցի—եղաւ կարճ պատասխանք:

— Երբ տուն կերթաս, ես քեզ կուղեկցեմ—ասացի նորան:

Ուսուցիչը զարմանքով նայեց վրան և ես ստիպուած էի զգալ, որ ուզում եմ ծառայութեան մտնել գիւղացու մօտ:

Ուսուցիչը չէր սպասում ալդ բանին և սկսեց յետ համոզել ինձ: Նրա կարծիքով, ես անպէտք էի ալդ գործի համար, որովհետեւ անդօր կինէի տանել ինձ սպասող բոլոր ծախորդութիւնները—աղքատութիւնը, քամին, վաս սնունդը, կոշտ անկողինը և ծանր աշխատանքը: Բացի դորանից այսպիսի եղանակին տղան կգիշերէ չօլզենդորֆում.

Սակայն այս բոլորն ինձ չվրդովեցին։ Ես կապեցի իրերս և գնացի ոչ թէ ներքեւ, այլ վերև, զետակի ուղղութեամբ։ Այսպիսի բռւք էր, որ չէին երևում ոչ ճանապարհը, ոչ տները և ոչ սարերը։ շուրջը ափրում էր սպիտակ գիշեր, քամին շուացնում էր, ծիւնի փաթիլները ծակծկում էին դէմքս։

Ինձ հարկաւոր էր, ինչպէս առել էին, երեք շրադացների մօտով անցնել և յետոյ բարձրանալ սարն ի վեր, ձախ կողմից։ Մկրտում ծախ կողմը ես ոչ մի սար չնկատեցի, և գնացի շաւզով, որտեղ երևում էին մարդկալին ոտների հետքեր ու ալդշաւզով գնում էի ծառերի և թփերի միջև, որոնցից երբեմն երբեմն թափում էին վրաս ծիւնի հաստ շերտեր։

Եւ դժուարութեամբ մազլցելով լուռ միայնութեան մէջ, մառախուղի և ծիւնի միջով, մտածում էի։ «ինչպէս ամայի էր ինչպէս միայնակ է լինում երբեմն մարդս երկրագնդի երեսին։»

Յանկարծ, ծիւնի փոշու մէջ, առաջս մի մարդ նկատեցիր Նա նստած էր ծիւնի վրայ, կու ենու տակ, ամբողջովին կռացած իմ կապոցից աւելի ծանր, ալիւրի երկու շուալի ծանրութեան տակ։ Նա հետում էր, ծեռքի վերի մասով մաքրելով ճակատի քրտինքը և շարունակ հետում էր ու հետում։ Դա մի ծերունի էր։

Ես մօտեցալ նրան և առաջարկեցի փոխել բեռներս։  
Նա հոգոց հանեց։

—Աստուած վարձասրէ քեզ։ Ամեն ոք իր բեռք պէտք է տանի։

—Բայց դուք հազիւ էք շունչ քաշում։

—Ճիշտ է հիշտ։ շնչարգելութիւն ունիմ։

Ես վերցրի նրա շուալները և ծերունին առաջ դնաց։ Նա անընդհատ կանգ էր առնում և ծանր շնչում։

Իսկ ինձ հետ, սիրելի բարեկամս, ալդ ժամանակ ինչ որ զարմանալի բան էր կատարւում։ Տեսնելով թէ ինչպէս առաջս գնում է իմ օգնութեամբ թեթևացած ծերունին, որի համար ես շրադացպանի աւանակի դեր էի կատարում, յանկարծ ես հասկացայ։ ահա նա, իսկականը։ Բոլորը ինչ ոք անց էի կացրել և կատարել մինչև ալժմ, ամենը ոչինչ էր։ Այն, ինչ ոք

ալժմ եմ անում—նա է կեանքիս մէջ կատարած առաջին իսկական գործը, և յանկարծ այնպէս երշանիկ և ուրախ զգացի ինձ, կարծես թէ մի տեսակ խնդութեան կրակ վառեցին անձիս մէջ։ Ինչ որ երգում էր իմ մէջ։ Օգնիր ծանրաբեռնուածներին և աշխատաւորներին տանելու իրանց լուծը...

Ո՞հ, բարեկամս։ Ինչպէս ամեն ինչ չնշին է թւում ալդպիսի բովէի առաջ։ Բայց ինքս ինձ գովելու կարիք չկար։

Ալժմ ծանր է կարգով պատմել։ Աղնապէս տարօրինակ է թւում ինձ, որ նստած եմ հիւղի մէջ փարախի կողքին, եռոտանի կլոր նստարանի վրայ և որդերից ոչնչացրած սնդուկի վրայ գրում եմ քեզ, հեռաւոր քաղաքը։ Նոյն գրչով, դեռ մի քանի շարաթ առաջ, ինքնավստահ և ճարտասան լեզուով խօսում էի ժողովրդական անտեսութեան մասին։ Բայց չես հաւատալի, թէ ինչպէս լիմար է քաղաքացին, որը խելօթ դատողութիւններ է անում գիւղական պայմանների մասին։

Սկսմել ուղղակի մարդու սկրան է մղկտում, ալսքան աղքատութիւն տեսներով։ Հոգսերի և տանջանքների վեհութեան առաջ, ամեն անմիտ բառ սառչում է շրթունքների վրայ։ Ես անզօր եմ արտադայտել այս ամենը «կօնտինենտալ փոստի» պարոն կառավարիչներին։ Իմ և նոյցա մէջ անդունդ բացուեց այն օրից, երբ մտայ այս նահապետական տունը։ Միմիալն քեզ եմ ուգում հաղորդել ամենը, ինչ որ կանցնի իմ գլխով այս ծանր, մուլթ տարուայ ընթացքում։ Ես վճռեցի դիմանալ մինչև վերջ, բայց դու օգնիր ինձ։ Երեկ երեկոյեան, պարկած լինելով փալտէ տաշտի մէջ, յարդէ բարձի վրալ, ծածկուած լինելով գառան հոտած բրդով առաստաղից վրաս կաթող շրի տակ, ես ընկնուեցի հոգով։ Բայց երբ այսօր առաւաօտ բարձրացաւ արեւը մերկ, հարթ կոնդերի վրալից և լուսաւորեց նրանց ծիրանեալ գոյնով բաց կապտագոյն երկնքի և ներքեւում թանձրացած արենա-մոխրագոյն ամպերի միջև, ես ուղղակի ցնծացի։ Տանտէրս զարմանքով նայեց վրաս—նա չէր սպասում, որ դեռ կան ամդկայի կերպով ուրախացող վարձուորներ։ Ալժմ մարդիկ գերադասում են հայույել։ Պարզ ասած, և ինչո՞ւ չը հայույել։ Երբ ալդ թեթևացնում է մարդուն։

Ցեսնում ես, արդէն սկսել եմ պաշտպանել գեղջկական արատները: Եթէ ես էլ ժամանակով նմանուեմ բարեմիտ զիւղացու, ով գիտէ զուցէ կարելի լինի ինձ ի ցոլց դնել իրքեւ հաղուաղիւտ բան:

Տանտէրս չէր էլ մտածում, թէ ինչ հրէշ է բնակուել նրայարկի տակ: Այդ ընտանիքի մասին—հետևեալ անդամ: Իսկ առայժմ մի բան եմ խնդրում, բարեկամ, չըթողնես ինձ:

ՅՈ ԽԱՆ

### Հինդերորդ կիրակի

Շնորհակալ եմ, բարեկամ, համակրական նամակիդ և ինձ յիմար չանուանելուդ համար. իսկ մացեալլ—ոչինչ: Կարծում եմ որ ոյժ կունենամ տանել այդ աշխատանքը:

Արդէն պատմել եմ քեզ, թէ ինչպէս երկու շարաթ առաջ մի ծերունու օգնեցի ալիւրի շուալները տուն տանել: Սա նոյնինքն Ադամն էր, որի մասին ասել էր ուսուցիչը: Նրա տունը դանուում է բարձր սարերի վրայ: Երբ մտանք ներս, ծերունին դիմեց կնոշ այս խօսքերով. «Ահա, եթէ սա ուզենար, կարող էր փախչել ալիւրիս հետ միասին, ես չէի կարող հասնել նրա ետևից. շնչարգելութիւնս դարձեալ սկսուել է»:

— Օտարներից աւելի շուտ կարելի է օգնութիւն սպասել քան սիրելի-դրացիներից—պատասխանեց կինը:

Նա վերցրեց կրակով լի կասկարան, չորացած խոտ ցանեց վրան և մօտեցրեց ամուսնու դէմքին, որը նստած էր գահաւորակի վրայ. ծերունին մի քանի ըսպէ ներս շնչեց ծուխը, լետոյ խորը շունչ քաշեց և ասաց. «Վիառք Աստծու, այժմ անցաւ»:

Երկաց որ նա շնչում էր կիւսախոտի \*) ծուխը: Ինձ խնդրեցին հանուել, կօշիկները թափ տալ և հանգստանալ: Շուտով ծանօթացրին և տան գործերի հետ: Մէկ որդին Լայրախ է, զինուոր է գնացել:

Միւսը պարկած է հարեւան սենեակում և հառաչում.

— Նրան հրացանով զարկեցին—ասաց կինը:

\*) Hexenkraut.

— Զինուարին զարկեցի՞ն:

— Ոչ, միւսին, Աշխարհիս երեսին չար գործեր շատ են կատարւում:

— Ես, մի փնթփնթալ պառաւ—ասաց գիւղացին— ինչ որ կալ, այն է լաւը: Կարող էր և աւելի վատ բան պատահել: Նա կարող էր և բանտում նստած լինէր, մինչդեռ ալժմ տանն է պառկած: Սորա համար որ ջուալները բերեց, կաթ եփիր, իսկ ես կերթամ տաւարի մօտ:

— Մեծ տնտեսութիւն ունիք—հարցնում եմ ես:

— Պարծենալու բան չկայ, իսկ գործ շատ կայ:

— Ձեզ հարկաւոր է ծառայող ունենալ:

— Իսկ ո՞րտեղից վերցնել:

— Բայց չէ որ միշտ կարելի է մէկին դտնել:

— Այսպիսին չկալ, որին կարողանանք վճարել: Չէ որ ներկայում վարձուորները ուղղակի հարստահարում են տիրոշ, նկատեց ծերունին:

— Ոչչից գո՞յ չեն լինում—ասաց տանտիկինք: — Այդպիսի մէկն ունէինք անցեալ տարի: Ոչ մի խօսք չէր լինում նրան ասել, և ամեն ինչ վաս էր, կերակուրն էլ միայն խողերի ուտելու բան: Մինչև այժմ ոչ ոք բացի նրանից իմ պատրաստած կերակուրը չէ պարսաւել: Երբեկից կիոշմանի նա...

— Մի տաքանար, կնիկ, — հանգստացնում էր նրան ծերունին. նրան էլ պէտք է խղճալ—ողորմելին գետնախնձորի ապուրն անգամ մարսել չի կարող:

Այստեղ ես հանդէս եկայ իմ առաջարկութեամբ:

— Լսեցէք, բարի մարդիկ, ես շատ բան եմ փորձել կեանքումս, և աւելի ծանր բաներ եմ տեսել, և թէպէտ ինքս գիւղացի չեմ ծնուել, այնուամենայնիւ գեղշկական աշխատանքը ինձ վնաս չի տայ: Ամեն բանի կարելի է սովորել: Վճարեցէք, ինչ-քան կարող էր: Ամառն էլ կմնամ ձեզ մօտ: Շշմարիտ, եթէ կամենում էք, ես կծառայեմ ձեզ:

Այդ ասելիս, ամենեին մոռացել էի տուածս ազնիւ խօսքը և միմիայն մի բան էի ցանկանում—օգնել այս խեղճերին: Ի՞նչպիսի վեհանձնութիւն, իսկ ծերուկները նստած լուռ նայում էին իրար: Վերջապէս Աղամն ասաց.

— Զդիանմ էր, թէ ինչ ասեմ: Եթէ սա չար մարդ լինէր, կփախչէր չուալիս հետ... սկսուեց ձևական դատ. բաղմաթիւ հարցեր առաջարկեցին, տեղեկացան ի միջի այլոց դաւանանքիս մասին, և վերջապէս վճռեց՝ ն, որ այս օտար մարդը ուղարկուած է իրանց սուրբ Նօսբուրգից, որին նրանք ամեն երեկոյ աղօթում են:

— Թող արդարէս լինի,—ասաց Ազամք: — Բայց մենք քեզ ամբողջ աւարով չենք կապի մեզ հետ: Այսօր կարող է քեզ լաւ երևալ այս առաջ խրճիթը, իսկ վաղը կհանդստանաս և կուղենաս հեռանալ այսուեղից: Իսկ եթէ մնաս, կստանաս քառասուն դուրսէն և շոր: Շատ չէ այս:

Ազմ ինկարագրեմ դաւիթը: Խրճիթը կանգնած է սարի գագաթին, նրա առաջ տարածւում են դաշտեր և մարգագետին, որոնք իշնում են ներքև զէպի առուակը: Տան մօտ—մերկ ծառեր, տան ետեր, աւելի բարձր—վիշտաերեների նօսր անտառ: Կողքից թփերի ծառատունը, որ ատամածւում է մինչև կիրճը, իսկ աւելի հեռու երկրորդ վարձու տրուող տնակը, այս բոպէիս նա դատարկ է: Դոները ցածր են, և մանելիս ստիպուած ես ակամալ ամենքին զլուխ խոնարհեցնել: Պատուհաններից էլ կարելի է նայել միայն կունարով: Մեծ սենեակը ծառալում է խոհանոցի, ճաշատան և ընդհանուր սենեակի տեղ. ալստեղ են մնում և հաւերն իրենց վանդակով, վառարանի մօտի խոռոչի մէջ: Բայցի այս սենեակից կան և մի քանի փոքրիկ սենեակներ քննելու և ուտելեղէնները պահելու համար: Արտաքին պատի մօտ շինուած են մի քանի փեթակներ: Գոճը և ամբարանոցը ընդարձակ են. երեսում է որ ժամանակով ալստեղ ընդարձակ տնտեսութիւն է եղել: Ինձ յատկացրին փարախի մօտի նկուղը, ուր առաջ բնակուելիս է եղել իրանց անդրանիկ որդին: Մերունին հետեւալ օրը ցոյց տուեց իր դանձերը—խոտը, դարձանը, հատիկը, վարսակը, վուշը, կանեփը և մի տեսակ հպարտութեամբ կանգ առաւ կուտի առաջ:

Դեռ պարզ չեմ հասկանում թէ ինչով են զանազանւում իրարից գորին և հաճարը, վուշը և կանեփը: Չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է զանազանել երկու սկ գառ-

Նուիները, կամ երկու միատեսակ ներկած հորթերն իրարից; Իմ բնակակիցները առաջին հակացքով զոկում են նրանց. ինչպէս երկում է փորձուած աչքի համար ամեն մի կենդանի իր գիմաղծերն ունի:

Ամենից առաջ պէտք էր կերակրել եղներին, հորթերին և ոչխարներին: Բայց չի կարելի նրանց կերակրել այնպէս ինչպէս վալրի դաղաններին: Օրուայ ընթացքում տալիս են նրանց որոշ քանակութեամբ խօս, շաղդամ, չորացած տերևներ, աղ և այլն: Դրանց վերաբերեալ ոչ խոհարարական գրքեր և ոչ դեղատոմսեր կան, այնպէս որ նորեկի համար սկզբում շատ ծանր է լինում:

Բայց արդ, որքան կարող եմ դատել, իսկի աշխատանք էլ չի համարում:

Լրագրներում գիւղատեսութեան մասին անմիտ քաներ գրելը այնքան էլ վնաս չի բերում. բայց եթէ գեղջուկը անմտութիւն գործէ՝ նրա խօսք կիտի, ցորենը կը բորբոսնի, կովը փարտիում ոտք կը վիրաւորէ: Գիւղացի լինելը աւելի դժուար է:

Դարձեալ մի քանի խօսք այստեղ անցկացրած առաջին օրուայ մասին: Երբ պառաւը կրակը չաղացրեց, մենք նստեցինք օջաղի շուրջը նստարանների վրայ. եթէ կանգնէինք՝ ծուխը, որ դանդաղ դուրս էր գնում պատի միշի արանքից, կալրէր մեր աչքերը: Հայրը խողի ճրագուով տրորում էր անճոռնի կօշիկները, մայրը կասկարայի վրայ խորովում էր գետնախնձորը, իսկ ես անհմուտ ծեռքով մանրում էի սև հացը գիշերուայ ապուրի համար:

— Ի՞նչ է անունդ. — հարցրեց մայրը, տեսնելով իմ անշնորքութիւնը:

— Հանս է անունս:

— Հանգէլ, ա՛լ ինչ ասեմ քեզ: Շատ խոշոր ես կոտրտում: Չգիտես ինչպէս պէտք է անել:

Ցանկարծ հարկան սենեակից ով որ կանչեց մօրը: Բացդունից նկատեցի, որ ալնտեղ ամեն ինչ դասաւորած է, կարծես մատուռի նման: Սեղանը ծածկուած է սպիտակ սփոցով, նրա վրայ դրած է կանթեղի տեղ ծառալող բաժակը: Սեղանի մօտ

բարձր անկողին և նրա վրայ մի պատանի: Նրա աշ, կտորների մէջ փաթըթած, ծեռքը ընկած էր երկնազո՞ն վերմակի վրայ: Դէմքը կոր, քնքոյշ, սպիտակի, կարծես իտալական քանդակի մարմարիոնէ արծան լինի: մեծ, մոյտ աչքեր, վերևի շրթունքի վրայ հաղիւ երեացոյ աղուամաղ: Շրթունքների միշից փարլում էին սպիտակ ասամները, ծախ ծեռքը գղղղում էր մոյտ, խիտ խնճուած մաղերը: Մի խօսքով կատարեալ գեղեցիկ:

Նա էր մօրը կանչողը:

— Ո՞րսեղ է Բարբելը, հարցրեց նա:

— Ի՞նչ ես ուզում, Ռոխերլ:

— Դարձեալ սաստիկ ցաւում է:

— Հանդսուացիր, զաւակս, թարմ սև ծիւթ կը դնեմ վերքիդ վրայ և լաւ կը կապեմ:

— Ենորհակալ եմ, մալրիկ: Բայց աւելի լաւ է թող Բարբելը անի այդ: Նա այնպէս ցաւ չէ պատճառում...

— Ետեի սենեակում բամբակ է գղղում:

Ես մտալ և նայեցի վերքը: Գնդակը դեռ չէր դուրս եկել և վերքը բորբոքուել էր, բայց մալրն ասում էր որ ծիւթը դուրս կքաշի գնդակը,

Մտաւ աղջիկը, Բարձրահասակ, նրբակաղմ—զարմանալի է, որ էլի պատահում են աղպախսի դէմքեր: Զեռքին բռնած ունէր բամբակի թելիկը, որ նշտութեամբ տեղաւորեց աթոռի վրայ: Գլխին հին փափուկ թաղիքէ գլխարկ ունէր, որը արագ շարժուածքով կախեց մեխից:

— Այդ գլխարկով պսակուեցինք մօրդ հետ, Բարբել, տսաց հալրը: Այն ժամանակ փետուրէ գեղեցիկ փունչ ունէր, իսկ ալժմ միայն կտորներ են կախած նրանից: Բայց թարմ դէմքը գեղեցիացնում է և հին զլխարկը, կատակեց նա, ակնյալտնի հպարտանալով աղջկանով: Ես ևս ուշադրութեամբ նայեցի նրան:

Աստուած իմ: Ա՝ աղջիկ:

ԴԱՍԱ

(Կշար.)

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ